

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2010 թվականին» վիճակագրական ժողովածուն ընդգրկում է հանրապետության 2010թ. արտաքին առևտրի վերաբերյալ տվյալները: Ժողովածուի նյութերի հիմքում ընկած են ՀՀ մաքսային վիճակագրության և վիճակագրական դիտարկումների արդյունքում ստացված տվյալները (ներառված չեն քաղաքացիների կողմից ուղևորությունների ժամանակ կազմակերպված առևտրի տվյալները): Նկատի ունենալով, որ «Վերգետնյա տրանսպորտային միջոցներ, բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմը եւ դրանց մասերը» ապրանքային խմբի գծով արտաքին առևտրում մեծ տեսակարար կշիռ ունեն ֆիզիկական անձանց կողմից իրականացված առևտրի ծավալները, ժողովածուի վերջում բերված հավելված 1-ում ներկայացվում է նշված ապրանքախմբի (բոլոր ապրանքային ենթախմբերով) արտաքին առևտրի ամբողջական պատկերը՝ ներառյալ ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտրի ծավալները:

Ժողովածուի մեջ բերված են արտահանման և ներմուծման ծավալները բնաիրային և արժեքային արտահայտությամբ՝ ըստ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի» (ԱՏԳԱԱ), հետևյալ հաջորդականությամբ.

- ապրանքային բաժին (I-XXI),
- ապրանքային խումբ (2-նիշ ծածկագիր),
- ապրանքային ենթախումբ (4-նիշ ծածկագիր),
- ապրանք (8-նիշ ծածկագիր):

Արտահանման ծավալներում ընդգրկված են ինչպես հայրենական արտադրության, այնպես էլ վերաարտահանված արտասահմանյան արտադրության ապրանքները, իսկ ներմուծման ծավալներում՝ արտասահմանյան արտադրության ապրանքները, որոնք ներկրվել են հանրապետություն՝ սպառման և վերաարտահանման համար:

Արտահանման և ներմուծման ծավալներում ընդգրկված չեն շրջանառության մեջ գտնվող արժեթղթերը, թղթադրամները և մետաղադրամները, դրամական ոսկին, հանրապետության տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումները, ցուցահանդեսների և տոնավաճառների համար ուղարկված կամ ներկրված ապրանքները:

Արտահանման ծավալները հաշվարկված են ՖՕԲ գներով, իսկ ներմուծմանը՝ ՄԻՖ-ով (ներառյալ ապահովագրությունը և տրանսպորտային ծախսերը՝ մինչև ներմուծող երկրի տնտեսական տարածք):

Արտահանման և ներմուծման արժեքային ցուցանիշների հաշվարկի համար ազգային դրամի վերահաշվարկումը ԱՄՆ-ի դոլարի, կատարվել է համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ամենօրյա պաշտոնական փոխարժեքի:

Ապրանքների արտահանման և ներմուծման հաշվառումը կատարվել է համաձայն ԱՏԳԱԱ դասակարգչի, որը մշակված է ապրանքների նկարագրման և կոդավորման ներդաշնակցված համակարգի (HS) 6-անիշ և Եվրոպական միության 8-անիշ համակցված անվանացուցակի (CN) ծածկագրման հիման վրա:

Արտահանման և ներմուծման ծավալների բացակայության դեպքում օգտագործվել է 0 նիշը, իսկ շատ փոքր ծավալների դեպքում՝ է 0.0 նիշը:

## Introduction

“Foreign trade of the Republic of Armenia for 2010” statistical handbook covers data on foreign trade of the republic for 2010. The handbook is based on the RA customs statistics and data received from statistical surveys (data on trade organized by citizens during the travels are not included). Taking into account that the volumes of shuttle trade have a big share in the external trade of the commodity group “Over-the-road vehicles, excluding railway or tramway vehicles and their spares”, the Annex 1 at the end of the handbook represents the complete picture of external trade of the above-mentioned commodity group (with its all subgroups), including shuttle trade volumes.

The handbook includes export and import volumes in kind and value by the “Commodity Nomenclature of External Economic Activity” (CNEEA) by the following sequence:

- Commodity section (I-XXI),
- Commodity group (2 - digit code),
- Commodity subgroup (4 - digit code),
- Commodity (by 8-digit code).

Both commodities of the home production and re-exported foreign production are included in the volume of export, while in the volume of import commodities of the foreign production are included that have been imported to the republic for consumption and re-export.

Securities, paper money and coins in circulation and coin, monetary gold, transit transportations of foreign freights through the territory of the republic, commodities sent or imported for exhibitions and fairs are not included in the export and import volumes.

Export volumes are calculated by FOB prices and import volumes by CIF (including insurance and transport expenditures to economic territory of the importer country).

To calculate the value indicators of export and import the re-calculation of the national currency to US Dollar has been implemented according to the daily official exchange rate established by RA Central Bank.

Registration of export and import of goods has been implemented according to the CNEEA classification that has been developed, based on the 6-digit harmonized system (HS) of description and coding of commodities and coding of 8-digit Combined Nomenclature (CN) of EU.

It has been used 0 in case of absence of export and import volumes and 0.0 in case of very small volumes.